ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~ԳԼՈՒԽ 5.1~~

~~ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ~~

~~Հոդված 47.1 Տուժանքները~~

~~1. Կարգավորող հանձնաժողովը լիցենզավորված անձանց կողմից սույն օրենսգրքի դրույթների, Կարգավորող հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իր իրավասությունների սահմաններում իրավասու է տալու խախտումները վերացնելու հանձնարարականներ և կիրառելու տուժանքների հետևյալ տեսակները.~~

~~1) նախազգուշացում.~~

~~2) տուգանք.~~

~~3) լիցենզիայի գործողության կասեցում.~~

~~4) լիցենզիայի գործողության դադարեցում:~~

~~Լիցենզավորված անձն իրավունք ունի հանձնաժողովի նիստում, որտեղ քննարկվում է իր նկատմամբ տուժանք կիրառելու հարցը, արտահայտելու իր կարծիքը, ներկայացնելու առաջարկություններ և առարկություններ անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով:~~

~~2. Լիցենզավորված անձի կողմից՝~~

~~1) սույն օրենսգրքի դրույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկից մինչև քառասունհազարապատիկի չափով.~~

~~2) Կարգավորող հանձնաժողովի տված լիցենզիայի պայմանները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից մինչև քսանհազարապատիկի չափով.~~

~~3) Կարգավորող հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև տասհազարապատիկի չափով:~~

~~3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքների գումարները Կարգավորող հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:~~

~~**(գլուխը լրաց. 23.06.15 ՀՕ-108-Ն)**~~